

Հյուրանոցների ամրագրման պայմաններ

Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում

Ընդհանուր դրույթներ

- › iMEGA Tour and Travel-ը Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում հյուրանոցների ամրագրման և այլ տուրիստական ծառայություններ մատուցող տուր օպերատոր է:
- › iMEGA Tour and Travel, այսուհետ Կատարող, ամրագրման հայտ ներկայացրած հաճախորդին՝ այսուհետ Պատվիրատուին մատուցում է հյուրանոցի ամրագրման ծառայություն միայն այն պայմանով, որ նա նախապես ծանոթացել է ամրագրման սույն պայմաններին:
- › Կատարողը հյուրանոցների ամրագրումն իրականացնում է նշված հյուրանոցների հետ համագործակցության պայմանագրերի հիման վրա:
- › Յուրաքանչյուր հյուրանոցի ամրագրում իրականացվում է տվյալ հյուրանոցի կողմից առաջադրվող ամրագրման պայմանների հիման վրա:

Ծառայության պատվիրումը

- › Ծառայության պատվերն իրականացվում է առաջարկվող հայտածնի մեջ անհրաժեշտ տվյալների հավաստի լրացման և այն Պատվիրատուին ուղարկելու, ինչպես նաև հեռախոսով, էլ-փոստով և կապի այլ միջոցներով ստացված ամրագրման հայտերի միջոցով:
- › Հայտի նախնական հաստատումը կատարվում է iMEGA Tour and Travel ընկերության աշխատակցի կողմից այն ստանալուց ոչ ուշ քան 48 ժամվա ընթացքում: Ոչ աշխատանքային կամ տոնական օրերի ընթացքում ուղարկված հայտերը սպասարկվում են առաջիկա աշխատանքային օրը: Որոշ առանձնահատուկ դեպքերում (բարձր զբաղվածության սեզոն, հյուրանոցի գերծանրաբեռնվածություն) iMEGA Tour and Travel-ն իրեն իրավունք է վերապահում նախնական ամրագրված հյուրանոցը փոխարինել մեկ այլ՝ նույնատիպ կամ առավել բարձրակարգ հյուրանոցով առանց Պատվիրատուի համար բնակության ծախսերի փոփոխության: Այդ դեպքում ամրագրման բաժնի պատասխանատուն անմիջապես կտեղեկացնի ձեզ կատարված փոփոխությունների մասին:

Արժեքը

- › Պատվիրվող ծառայության գինը որոշվում է Պատվիրատուի կողմից պատվիրման պահին iMEGA Tour and Travel-ի www.imegatour.com կայքում գործող գնով:
- › Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի բոլոր հյուրանոցների գները ներկայացված են USD, AMD, RR, EUR արժույթներով և գործում են անհատական պատվերների համար: Խմբակային հայտերի համար գները ենթակա են վերանայման:
- › Բոլոր գները ներառում են նախաճաշի և տեղական հարկերի (ԱԱՀ) արժեքները, եթե այլ բան նշված չէ:
- › Համարների ամրագրումն իրականացվում է ինչպես **երաշխիքային** սկզբունքով (կանխավճար, ամբողջ արժեքի վճարում, առաջին օրվա արժեքի վճարում) այնպես էլ **չերաշխավորված ամրագրման** սկզբունքով (վճարումը կատարվում է ժամանելուց հետո կանխիկ՝ մեր գրասենյակում կամ հյուրանոցում):

Ուշադրություն

- › Ոչ երաշխավորված սկզբունքով ամրագրման դեպքում Կատարողը հյուրանոցում ազատ տեղերի առկայությունը երաշխավորում է միայն պատվերի հաստատման օրվա դրությամբ:
- › Այլ հյուրի կողմից ամրագրման երաշխավորված հայտի ստացման դեպքում հյուրանոցն իրեն իրավունք է վերապահում առաջնահերթություն տալ այդ հայտին և չեղարկել ոչ երաշխավորված ամրագրումն՝ այդ մասին տեղյակ չպահելով հայտատուին:

› Պատվիրատուն պարտավոր է Կատարողին ժամանակին տեղյակ պահել երաշխավորված ամրագրումի վճարման համար: Եթե վճարումը չի կատարվում սահմանված ժամկետում, IMEGA Tour and Travel իրավունք ունի չեղարկել կատարված ամրագրումը:

Ծառայության համար վճարման հնարավոր ձևերն ու պայմանները

› Անհատական ամրագրումների դեպքում վճարումը պետք է կատարվի առնվազն հյուրի ժամանելուց 72 ժամ առաջ:
› Վճարման ժամկետների լրացուցիչ պայմանները կնշվեն Կատարողի կողմից ամրագրման հաստատման պայմաններում:

Վճարում բանկային փոխանցումով

› Կատարողի պատվիրված ծառայությունների վճարման համար Պատվիրատուի հաշվին է փոխանցում վերջինիս կողմից ներկայացված հաշիվ-ապրանքագրում նշված չափով գումար:
› Փոխանցումը կատարելուից հետո Պատվիրատուն պարտավոր է IMEGA Tour and Travel-ին ներկայացնել վճարման անդորրագրի պատճեն, որ պետք է ներառի հետևյալ տվյալները՝ ամսաթիվ, գումարի չափ, փոխանցման համար, փոխանցողի անուն/ազգանուն, ամրագրման համարը, որ ներկայացված է պատվերի հաստատման մեջ:

Ուշադրություն

› Բանկային փոխանցումների բոլոր ծախսերը կատարում է Պատվիրատուն:

Կանխիկ վճարումը IMEGA Tour and Travel-ի գրասենյակում կամ հյուրանոցում

› Չերաշխավորված ամրագրման դեպքում Պատվիրատուն կարող է վճարումը կատարել IMEGA Tour and Travel-ի գրասենյակում կամ հյուրանոցում՝ կանխիկով:
› Զարտային վճարումների դեպքում ամրագրման արժեքը ենթակա է վերանայման ըստ Հյուրանոցի պայմանների:

Ուշադրություն

› Ոչ երաշխավորված սկզբունքով ամրագրման դեպքում Կատարողը հյուրանոցում ազատ տեղերի առկայությունը երաշխավորում է միայն պատվերի հաստատման օրվա դրությամբ:
› Այլ հյուրի կողմից ամրագրման երաշխավորված հայտի ստացման դեպքում հյուրանոցն իրեն իրավունք է վերապահում առաջնահերթություն տալ այդ հայտին և չեղարկել ոչ երաշխավորված ամրագրումն՝ այդ մասին տեղյակ չպահելով հայտատուին:

Անվտանգությունն ու գաղտնիությունը

› Ամրագրման համար տրամադրվող տեղեկատվությունն օգտագործվում է բացառապես Կատարողի կողմից՝ պատվիրված ծառայությունների մատուցումն ապահովելու համար:
› Կատարողը պարտավորվում է ամրագրման համար Պատվիրատուի կողմից ստացված անձնական տվյալներն առանց նրա համաձայնության չիրապարակել, չփոխանցել, ժամանակավոր օգտագործման չհանձնել երրորդ անձանց կամ կազմակերպությունների:
› Սույն պայմանը չի վերաբերվում Հյուրանոցներին, որոնք ստանում են Պատվիրատուի անձնական տվյալները՝ ամրագրման և ծառայության մատուցման համար:

Ամրագրումը չեղյալ համարելու պայմանները

- › Սահմանված ժամկետից շուտ ամրագրումից հրաժարվելու դեպքում Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին փոխանցել նրա կատարած երաշխավորական վճարումները՝ զանձելով միայն բանկային փոխանցման ծախսերը:
- › Սահմանված ժամկետից ուշ ամրագրումից հրաժարվելու (տարբեր հյուրանոցների համար գործում են տարբեր պայմաններ) կամ հյուրանոց չգալու դեպքում Պատվիրատուն զանձում է առաջին օրվա սպասարկման համար նախատեսած բոլոր ծախսերը:
- › Սույն պայմանները վերաբերվում են միայն անհատական ամրագրումներին: Խմբակային ամրագրումների դեպքում գործում են հատուկ պայմաններ, որոնք նշվում են խմբակային ամրագրման պայմանագրում:

Պատասխանատվությունը

- › Ամրագրման այս համակարգը նախատեսված է անհատական օգտագործման համար, այս կայքում հրապարակված ցանկացած կյուրթի օգտագործումն առանց IMEGA Tour and Travel-ի գրավոր համաձայնության՝ արգելվում է:
- › IMEGA Tour and Travel-ն իր վրա պատասխանատվություն չի վերցնում և չի երաշխավորում, որ ներկայացված տեղեկատվության ինչ-որ մասը կարող է հնացած կամ սխալ լինել:
- › IMEGA Tour and Travel-ը պատասխանատվություն չի կրում հյուրանոցների կողմից մատուցվող ծառայությունների որակի համար:
- › IMEGA Tour and Travel-ը պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ամրագրման համար ներկայացված որևէ տվյալի սխալ լինելու համար: Պատվիրատուն պետք է ուշադիր լինի հատկապես իր էլ-փոստը ճիշտ գրելիս, որովհետև հետագա ամբողջ նամակագրությունն իրականացվում է այդ փոստի միջոցով:
- › Ամրագրում կատարող անձը ներկայացնում է բոլոր զբոսաշրջիկների շահերը, պատասխանատվություն է կրում Կատարողին ներկայացվող նրանց անձնական տվյալների իսկության և հյուրերի կողմից բոլոր վերոնշյալ պարտավորությունների կատարման համար՝ ներառյալ պատվերի համար վճարումն ու նրանից հրաժարումը:
- › Կողմերն ազատվում են պատասխանատվությունից վերոնշյալ փոխադարձ պարտավորությունների կատարմանը խանգարող անհաղթահարելի ուժի առկայության դեպքում (Ֆորս-մաժոր): Այդպիսի իրավիճակի առաջացման դեպքում կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է տեղեկացնել մյուսին հնարավորինս կարճ ժամանակահատվածում:

Պահանջներ

- › Պատվիրված ծառայություններից դժգոհելու կամ ընդհանրապես հրաժարվելու ցանկության դեպքում Պատվիրատուն պարտավոր է գրավոր տեղեկացնել IMEGA Tour and Travel ընկերությանն առավելագույնը 3 օրվա ընթացքում:

Այլ պայմաններ

- › Կատարողն իրեն իրավունք է վերապահում առանց նախնական իրազեկման փոփոխություններ, լրացումներ և կրճատումներ անելու սույն կայքում առաջարկվող ծառայությունների մատուցման պայմանների և կարգի մեջ: